

Մյունիք-Արցախի տարածքի բարբառների ստուգաբանություն. անշեշտ սկզբնավանկի թուլացում

Հրաչ Մարտիրոսյան (Վանաձոր, Լեյդեն, Վիեննա)

Անշեշտ սկզբնավանկի թուլացումը

1. Մյունիքի և Արցախի տարածքների բարբառներում բազմավանկ բառերի սկզբնավանկի ձայնավորը թուլանում է: Օրինակ.

- Գորիս *սըրանօ/ուց* ‘ձիթահանք’ (հմմտ. *ասաիր* ‘ձիթահանքում բանող բանվոր’),¹ Ղարաբաղ *սըրանուց*, սեռ. *սըրընուցու* ‘ձիթահանք’² < միջին հայերեն *ասարանց* ‘ձիթահան արհեստանոց՝ գործատուն’.³
- *ածելի* (5-րդ դ.) > Գորիս, Ղարաբաղ, Շամախի *ծի՛լի*; հմմտ. Ագուլիս *ծէ՛լի*, Արարատյան *ածլի*, *առծըլի*, Մուշ *արձըլի* և այլն.⁴
- *ականատ* ‘թակարդ’ (Եփրեմ, «Վարք հարանց» և այլն) > Ղարաբաղ *կա՛նատ* ‘թռչուն որսալու թակարդ’.⁵
- միջ. հայ. *հացհան* ‘կեռ ծայրով երկաթե ձող (ակիշ)’ թոնրի մեջ ընկած հացը հանելու համար’ (16-րդ դարի ձեռագիր հիշատ.),⁶ *հացահան* (Զաքարիա Քանաքեռցի, 17-րդ դար) > Գորիս, Ղարաբաղ *ծրհան*; հմմտ. Շամախի *ծահան*, Վան *խասխան* ևն:⁷

2. Ղարաբաղ *րէքնակ* vs. գրաբար *արեզակն*

- երբեմն մեկնաբանվում է որպես բառասկզբնային **r*-ով հնդեվրոպական **h₂rey-* նախաձևի հնատիպ արտացոլում, հմմտ. սանսկրիտ *ravi-* ‘արև’:⁸

3. Սակայն.

- *րէքնակ*-ի կողքին կան՝ *ըրէքնակ*, *ըրիքնակ*, *ըրիհյնակ* և այլ ձևեր⁹
- բազմավանկ բառերի սկզբնավանկի ձայնավորը թուլանում է (տես 1)
- հայերենում բառը չի կարող սկսվել *p*-ով, ուստի թե՛ հ. -ե. **Hr*-ի, թե՛ որևէ փոխատու լեզվի բառասկզբնային **r*-ի դեպքում հայերենում ունենք *եր-* կամ *ար-*: Սա համահայկական օրինաչափություն է, և մենք ամուրի հիմք չունենք մտածելու, թե որևէ բարբառ խուսափել է դրանից:¹⁰
- Հայ. *արև* (սեռ. հոլ. *արեզ* < **արեզ-ի-*) < հնդեվր. **h₂rey-i-*, հմմտ. սանսկրիտ *ravi-* ‘արև’, նաև խեթ. *haru(ua)nae-zi* ‘լուսանալ’:

4. Հետևաբար *րէքնակ* ձևում նույնպես կարող ենք արձանագրել ընդամենը բառասկզբի ձայնավորի անկում:

¹ Մարգարյան 1975, 376b, 469b:

² Մարգարյան 2013, 670a:

³ Ավագյան 1978, 28-32; Միջշայբառ 2009, 78a:

⁴ ՀԱԲ 1, 101-102; Մարգարյան 1971, 211, 1975, 311b:

⁵ ՀԱԲ 1, 107-109:

⁶ Միջշայբառ 2009, 417b:

⁷ ՀԱԲ 3, 65a; Մարգարյան 1975, 112, 406b; Մարգարյան 2013, 308b:

⁸ Հովհաննիսյան 2000, 122; Երվանդյան 2007, 26:

⁹ Դավթյան 1966, 319:

¹⁰ Տես Martirosyan 2010, 135-137, 714-716, 740-741:

5. Մյունիքի ու Արցախի տարածքների բարբառային բառեր ստուգաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել քննվող օրինաչափությունը.

- բաղաձայնասկիզբ բառերը կարող են ածանցվել բազմավանկ ձայնավորասկիզբ բառերից՝ բառասկզբնային ձայնավորի կամ սկզբնավանկի անկմամբ կամ թուլացմամբ:

► Ստորև կներկայացնեմ այդ սկզբունքի կիրառմամբ ստուգաբանական մի փորձ:

***Ճրտավանդ*՝տանիքի հաստ գերանները՝ բառի ստուգաբանությունը**

6. Գործիս *Ճրտավանդ*՝տանիքի հաստ գերանները՝ (Մարգարյան 1975, 434a); Ղարաբաղ *Ճրտավանդ*՝տանիքի հաստ գերանները՝ (Մարգարյան 2013, 471c)

- Աճառեան 1913, 734b՝ **ճառանդ*, առանց ստուգաբանական կամ բառակազմական դիտարկումների
- ՀԱԲ-ում չեմ գտնում այս բառը կամ նրա հնարավոր բաղադրիչները:

7. Կարծում եմ *ճրտավանդ* = *աճառ*՝տանիք¹¹ + *-ա-* հոդակապ + **վանդ*՝հյուսվածք, հյուսված բան՝

- Դրանցից առաջինը՝ հմմտ. միջին հայերեն և բարբառային *օ/ոճոռք*՝առաստաղ՝, թեև ձայնավորների հարցն անհստակ է:¹²
- Իսկ երկրորդն առկա է *վանդակ*՝թելերից՝ ճյուղերից կամ այլ նյութից հյուսված որևէ բան (վանդակ, զամբյուղ, կասկարա, ուռկան և այլն)՝ և *հրաւանդ*՝կրակի կասկարա՝ (*զհրաւանդսն*, Բ Գիրք մնացորդաց դ.16¹³) ոսկեդարյան բառերի¹⁴ մեջ:

◊ Հմմտ. *վանդակ* բառի՝վերնատան վանդակապատ մաս՝ իմաստը (ՆՀԲ 2, 782):

8. Այսպիսով՝ **աճառ-ա՛-ւանդ* կամ **օճոռ-ա՛-ւանդ* (տանիքի գերանների վանդակահյուս հորինվածքը, գերանապատ՝ գերանակապ տանիք՝ բնիմաստով) օրինաչափորեն > *ճրտավանդ*՝ բառասկզբի *ա-ի* անկումով և շեշտին նախորդող ձայնավորի թուլացմամբ, ճիշտ ինչպես՝ *ասարանոց* > *սրրա՛նոց*:

Հրաչ Մարտիրոսյան, 21.04.2016, Վիեննա

hrech.martirosyan@gmail.com

¹¹ Տե՛ս ՀԱԲ 1, 140a; հմմտ. նաև Միջնադար 2009, 35b՝ *աճար*:

¹² ՀԱԲ 1, 140a; Միջնադար 2009, 609a, 824-825:

¹³ Տե՛ս Խալաթեանց 1899, 60:

¹⁴ ՀԱԲ 4, 304-305: Հմմտ. նաև *ապաւանդակ*, *բարձրաւանդ(ակ)*, *դարաւանդ* ևն (ՀԱԲ 1, 232b, 427-428, 635-636):

Այս արմատի ստուգաբանության շուրջ տե՛ս ՀԱԲ 4, 305; Ջահուկյան 1987, 515, 545, 2010, 68b, 704a; Olsen 1999, 250: